ոեաց, որպէս ընթերցայք եւ լուայք, ուրեմն արդարութեամբ գործադրեցէք զբառն բաժանորդ, ապա թէ ոչ՝ չհամարձակիմք հաւանիլ փոքու իրաց, զի յայտնապէս պատճառ լինիք բողոք բառնալոյ առ Տէրութիւնն և ճանաչացուցանելոյ զնա։ Սրտմտեալ Դատաւորին գոչէր, ոչ կարեմ լուծանել զխնդիրս ձեր, գրեցից առ Տէրութիւնն զի 'ի բաց արասցէ յինէն զգործս. զի պաշտօնն իմ էր տալ զբառնալի հիւսիսային դրան և զուխտս Այրին բաժանորդ առնել երկուց ազգաց, որպէս և արարի իսկ, և դարձեալ առեմ 'ի լուր ամենեցուն ըստ մտաց հրովարտակին Սէլիմայ, և երկուց հրովարտակաց Մահմուտայ՝ երկու ազգք բաժանորդ էք Այրին և հիւսիսային դրան։ Հայք, զբաժանորդ բառն իմանամք 'ի բաժանորդ տեղիս ընդ Ցունաց կատարել զօրէնս մեր պատարագօք, կանթեղօք և այլ եկեղեցական սպասուք, որպէս եւ գրեալ է. 'ի կատարել զօրէնս չլինել արգել միմեանց, դուք այժմ հակառակ հրամանի արգելուք կատարել զօրէնս մեր, և այսպիսի բանիւք համարձակութիւն տալ երեւիք Ցունաց, որոյ վասն եւս գրեալ է։ Դատաւորն՝ զիս եւս յանցաւոր դատէք, որպէ՞ս հրամայեցից զոր չէ գրեալ Թագաւորն, պատարագ կանթեղ պատկեր, միթէ քահանայ կեավուրա՞ց իցեմ գիտել զհանգամանս օրինաց ձերոց և հրամայել, զի ոչ ներեն օրէնք մեր գիտել զայն, զոր դուք պատարագն անուանէք, եւ հրաման տալ, այլ որպէս գիտէք զօրէնս ձեր այնպէս արարէք։ Հայք ոչ երբէք կամէին խաղաղիլ, այլ սոփէին ասել՝ թէ զոր ինչ ունին Ցոյնք զնոյն արասցեն և Հայք։ Եւ նորա վարանեալ 'ի միտս իւր ասէր՝ ոչ է գրեալ Թագաւորին խափանել զօրէնս Ցունաց, և հաստատել զՀայոց։ Հայք՝ ոչ այդպէս, այլ Հայք յամենայն պարագայս ըստ Ցունաց կատարեսցեն զօրէնս։ Դատաւորն, որպէս կամիք այնպէս արարէք, զմիջամտեմք։ Հայք՝ ոչ այդպէս, այլ պարտ է հրամայել ձեզ բերանով, հրամայեցաք ասէ վասն ուխտին ձերոյ, զի զոր ինչ Ցոյնք և Հայք առնէին յառաջագոյն այնպէս արասցեն։

Հայք՝ ունէաք յառաջագոյն զսովորութիւն պատարագելոյ, բայց այժմ Ցոյնք արգելուն. զի՞նչ արարիցս ասէ. զի Ցոյնք սկզբանէ մինչեւ ցայժմ ունին զամենայն ինչ, այլ